

ԿԱՄԱՐ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԳԵՂԱՐՈՒՆԵՍԻ
ԱՆԿԱԾ ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹ

25



25

ՊԷՅՐՈՒԹ 2016



բուհական դասագրքերում, հայոց լեզուի բառապաշարի մասին խօսելիս անպայման պետք է նկատի ունենալ նրա ծագումնաբանական, շերտաբանական, ըստ գործածութեան ոլորտների, գործուն եւ ոչ գործուն բառաշերտերի, ըստ ոճական արտայայտչական գործածութեան եւ դերի դասակարգումը:

Երկու պոէմների բառապաշարը քննելիս առաւել ուշադրութիւն ենք դարձրել շերտաբանական դասակարգմանը:

Թումանեանը եւ Չարենցը հենց այնպէս չեն օգտուել բառապաշարի այս կամ այն շերտից: Դա պայմանաւորուած է եղել ընտրուած նիւթով, գրողի մտածելակերպով, պատկերաւորման սկզբունքներով: Նրանք մեր լեզուի բառազանձից օգտուել են ապաստօրէն. իւրաքանչիւր հերոսի կերպաւորելիս կիրառել են նրա հոգեկան աշխարհին եւ գործելակերպին բնորոշ բառեր: Բառերի հմուտ ընտրութիւնն ու տեղին գործածութիւնը թելադրել են էպոսին հարապատ կառուցուածք, գործողութիւնների պատկերում, օգնել են կենդանի գծերով ներկայացնելու հերոսներին: Պոէմներում, սակայն, նոյն հերոսները տարբեր են իրենց բնութագրումներով: Դա պայմանաւորուած է գրողների կիրառած բառապաշարի ու արտայայտչական միջոցների իւրայատկութիւններով:

Դիտարկուող երկու պոէմներում էլ զլխաւոր հերոսը Դաւիթն է, որը մարմնաւորում է մեր ժողովրդի հերոսական ոգին:

Թումանեանի Դաւիթը բնութագրում է ոչ միայն հեղինակային, այլեւ միւս հերոսների խօսքում: Բնական է, որ հեղինակային խօսքում առատ են դրական բնորոշումները՝ քաջ, պնդի, հսկայ, Առիւծի կորին, հաւատարիմ իր հողին ու ջրին, իր հայրենիքին, Սասնայ մայրերին ու քոյրերին, բարի դրկիցներին, ողջ ժողովրդին: Նոյնիսկ հակառակ կողմի՝ թշնամի Կոպբաղիի աննպաստ խօսքում էլ է դրականօրէն բնորոշում Դաւիթը.

*Մի իւենթ ծնուեց հայոց ապգին,
Ո՛չ ահ գիտի, ո՛չ տէր ու մեծ,
Գլուխս էսպէս տուաւ ջարդեց,
«Չե՛մ տալ, ասաւ, իմ հօր ոսկին,
Չե՛մ տալ կանայքն իմ հայ ապգին,
Քո թագաւոր, ասաւ, թող գայ,
Թող գայ ինձ հետ կոխի անի,
Թէ դոչաղ է՛ պոռով տանի»:* (Թ, էջ 25)¹

Չարենցը նոյնպէս հեղինակային խօսքում Դաւիթին պանծացրել է բացարձակ գնահատումներով՝ *աներեր, արդար, արեգական, արեւաւոր, դիւցապուն, պօրեղ, հրկէզ, հուրհեր, սէգ.*

*Սհեղ էր Դաւիթն ու ահաւոր,
Իբրեւ այր արդար, ռամիկ պինուոր,
Իբրեւ անսասան դիւցապուն, որ
Կուում էր սրով իր անպարտ հօր:* (Չ. էջ 196)²

¹ Թումանեան Յ., Երկերի լիակատար ժողովածու, «ԳԱ հրատ.», հ. 4, Ե., 1991, էջ 25: Այսուհետեւ սոյն հրատարակութիւնից մէջբերման էջը Թ սկզբնատառի հետ կը նշուի շարադրանքում՝ փակագծերի մէջ:

² Չարենց Ե., Երկերի ժողովածու, ՀԽՍՀ ԳԱ հրատ., հ. 4, Ե., 1968, էջ 196: Այսուհետեւ սոյն հրատարակութիւնից մէջբերման էջը Չ սկզբնատառի հետ կը նշուի շարադրանքում՝ փակագծերի մէջ:



Թշնամի Մելիքի հակադրությունն է նա իր դիցապական վեհութեամբ.

*Եւ կանգնեց Դաւիթը նրա դէմ
Անասան, անահ դէմքով վսեմ,
Հայեացքով պայծառ ու ժպիտով սէգ,
Բոցավառ, ինչպէս պայծառ արեգ: (Թ, էջ 196)*

Սակայն երկու պոէմներու համադրական քննությունը երեւան է բերում նաեւ տարբերություններ: Ժողովրդախօսակցական լեզուն առաւել հարապատ է Թումանեանին. նա այդ ոլորտի բնորոշ բառերով է ներկայացնում հերոսներին, նրանց միջավայրը: Անշուշտ, այդ պոէմներում առաջնային ու կարեւոր տեղում է գրական հայերէնը, որին օրգանապէս միահիւսուած ժողովրդախօսակցական ու բարբառային տարրերը ինքնատիպութիւն են հաղորդում պոէմներին, զօրեղացնում նրանց պատկերաւորութիւնն ու ներգործուն ուժը:

Դաւիթը երկու պոէմներում էլ բնութագրուած է որպէս առասպելական ուժի տէր, բնական բարութեամբ ու արդարասիրութեամբ օժտուած դիցապուն հերոս, նոյնիսկ կարելի է ասել՝ հեղինակներն իրենց երկերում մեղմ են վերաբերուել նրա «ծուրթեանն» ու խենթութեանը: Բարի հումորով նրան անուանել են *խենթ* (Թ, էջ 23), *խելառ* (Թ, էջ 21), *դանդալոշ* (Թ, էջ 21), *ժուռ* (Թ, էջ 183), *խենթ* (Թ, էջ 185), *խելուկ* (Թ, էջ 189), *մանուկ միամիտ* (Թ, էջ 193):

Սակայն տարբեր է նրանց վերաբերմունքը Ձէնով Օհանի նկատմամբ:

Թումանեանը թէեւ չի շրջանցել «սահից սարաւիած», թշնամու առաջ գլխաբաց ելած, աղաչանքով նրա ոտքերն ընկած Օհանին, որ գութ էր հայցում անողորմից, սակայն պահել է էպոսի «հէրահոտ հօրոխպօր» հարապատութեան գիծը՝ նրան ներկայացնելով որպէս Դաւիթին «հերութիւն արած» պաշտպանի, նրա ու երկրի ճակատագրով մտահոգ հերոսի: Մինչդէռ Չարենցը Ձէնով Օհանին ներկայացրել է որպէս թուլակամ, թշնամուն հնապանդ ստրկամիտ մի էութիւն: Եւ բնական է՝ հերոսի բնաւորութեան այս կողմերը պէտք է ներկայացուէին բառական համապատասխան միջոցներով:

Ունենք Ձէնով Օհանի երկու բնութագիր: Թումանեանինը՝

*Ձէնով Օհանն էլ ինչպէս հայր ու մեծ,
Օրհնեց, խըրատեց նրան հայրաբար
Դէպի Սասնայ դաշտ դրաւ ճանապարհ... (Թ, էջ 28):*

Մի այլ դրուագում Թումանեանը բնորոշ գծերով է ներկայացրել Ձէնով Օհանի՝ իրական հարապատի հոգածութեան դրսեւորումը վտանգի մէջ յայտնուած Դաւիթի հանդէպ: Երապում տեսնելով Մարայ աստղի պայծառ ցոլցումն ու Սասնայ դալկացած աստղի մարմրելը՝ շտապում է փրկել Դաւիթին.

*Օխտը գովջի կաշի հազաւ,
Որ չպատոռի իրեն զօռից,
Կանգնեց Օհան ամպի նման,
Գոռաց Սասնայ սարի ծէրից: (Թ, էջ 35)*

Այլ է Չարենցի Ձէնով Օհանը: Այս կերպաւորման մէջ տարբեր են բառապաշարը, պատկերաւորման եւ արտայայտչական միջոցները: Օհանին բնորոշ մակդիրներն են՝ *ժլատ, մահատիպ, մառ, նեռ իշխան, նենգ, նուատ, չար, չարի սովոր* եւ այլն:



Գրեթէ նման բառապաշարով է բնութագրուած թշնամի Մրսրամելիքը՝ *արնակոխ աչքեր, արնանենգ, դաժան, դարանամիտ, խարդախ, նեռ արքայ, չարածին, սեւ արքայ* եւայլն: Օհանի ստրկամտութեան ու հնազանդութեան նկատմամբ Չարենցի վերաբերմունքը նկատելի է հետեւեալ տողերում.

*Գնամ մեր Օհանն ահով, դողով,
Արքայի առջեւ այն անողոք,
Գլուխ խոնարհեց ազգով, ցեղով,
«Քոնն է,- աղերսեց,- «Երկիր ու հող»,
Ընծայեց նրան ոսկի շողշող,
Գերութեան յանձնեց Սասունը ո՛ղջ: (2, էջ 181)*

Կիրառելով ժողովրդախօսակցական բառեր՝ Թումանեանը հաւատարիմ է մնացել հայ էպոսի ոգուն. չէ՞ որ ժողովրդի լեզուն հենց էպոսի լեզուն է, որով արտայայտում է ժողովրդի ոգին: Իսկ ժողովրդական բառերն ու բառաձեւերը աւելի հարապատ են ու յատուկ պոէմում կերպարուած էպոսի հերոսներին, քան գրական կամ գրքային ձեւերը: Այդ բառերը գրական լեզուի համարժեքներով փոխարինելու դէպքում կը կորցնէին իրենց ոճական արժեքն ու գեղարուեստական խօսքի բնականութիւնը: Մինչդեռ այդ բառերի ճիշդ ընտրութեամբ եւ տեղին գործածութիւնը կենդանացնում, ոգի ու շունչ է տալիս հերոսի կերպարին: Այսպէս՝ *ախպէր, անթարոց, աշխարք, արին, բօզայուկ, դուշման, եղ ու չորթան, երեխի, էգուց, էսքան, լեղաճաք, լրդրական, կերթամ, ժածք, խալիս, հայրաթ, հե՞ր (ինչո՞ւ), հերսոտ, ճիտ, մուրատ, նանի, շլինք, պինչ, ջուխտ, ոանչպար, ոամիկ, փլեկ, քամար* եւայլն:

Թումանեանը պոէմում ժողովրդախօսակցական բառերի հետ միասին գործածել է նաեւ բարբառային բառեր. *ինչպէս՝ ամա, դատարկուն, երեստ, երկայնք, թեղած, խարաք, կրտեր, կոռ, հարամի, դարավաշ, դոչաղ, մկունդ, սրտաճաք, տափ, ջաղու, օղա, օխնել, օխտը* եւայլն:

«Մեր իրականութեան մէջ,- գրել է Ս. Մելքոնեանը,- գրականութեան լեզուն ժողովրդական լեզուի, այլեւ բարբառների կենսունակ տարրերով հարստացնելու վճռական շարժումը վերաբերում է անցեալ դարի (այսինքն՝ 19-րդ դարի - Ն.Թ.) վերջին երկու տասնամեակին: Յ. Թումանեանը, ապա Ա. Իսահակեանը իրենց ստեղծագործութիւններում լայն չափով օգտուեցին ժողովրդական լեզուի գանձերից, յատկապէս ժողովրդական մտածողութիւնը հարապատօրէն արտայայտող ոճերից ու դարձուածներից՝ կենդանացնելով եւ ժողովրդականացնելով գրականութեան լեզուն»:³

Բարբառները հարստացրել են մեր գրական լեզուն: Խօսակցական լեզուի կամ գեղարուեստական գրականութեան միջոցով բարբառային շերտի բառերը մտել են գրական լեզու եւ երբեմն էլ, ինչպէս վերը բերուած օրինակներում տեսանք, դժուար է սահմանապատել ժողովրդախօսակցական եւ բարբառային բառաշերտերը:

Ահա մի քանի բնորոշ օրինակներ.

Գնաց Օհանը *երեխի* ոտի
Մի վոյգ *ոտնաման* բերաւ երկաթի: (Թ, էջ 12)

Գնաց նորից նոր մեր Դաւթի ոտի
Մի *ջուխտ* նոր *տրրեխ* բերաւ երկաթի: (Թ, էջ 14)

Ի՞նչ եւ ուրիշի *եթիւնը* բերել,
Նստեցրել գլխիս պարապ հացակեր: (Թ, էջ 12)

³ Մելքոնեան Ս., Թումանեանի պոէտիկայի լեզուն եւ ոճը, Եր., 1969, էջ 188:



Հետաքրքիր է, որ Թումանեանը *նորնաւան* բառի հետ օգտագործել է *չոյգ* բառը, իսկ *տրեխ* բառին յարմար է գտել *ջուխտ* բառը՝ այն աւելի մօտ համարելով ժողովրդական մտածելակերպին: Իսկ *եթիմ* բառը գործածել է *որբ* բառի փոխարէն՝ աւելի ընդգծելով եւ խստացնելով Օհանի կնոջ՝ Սառայի՝ Դաւթի նկատմամբ դրսեւորած անտարբերութիւնը:

Թումանեանի պոէմում առկայ են նաեւ Լոռուայ խօսուածքին բնորոշ *արին, բօւլալուկ* (գորշ) *նապաստակ, զօռով, էն, լիդր, խալի, խալի, կորկում, կուռ, հալա, հարամի, դուլդուն* (կտրիճ, քաջ), *շվաք, ռանչպար, վրոսպ, փրթի, քամար, քուրջ* (մուշտակ) եւ այլ բառեր: Ինչպէս նկատել է Դ. Դեմիրճեանը, «...Թումանեանն այնքան է մօտեցել ժողովրդական լեզուին եւ անցել առաջ, որ արդէն սկսում եւս զգալ Լոռու բարբառը կամ աւելի ճիշդ՝ առհասարակ բարբառը»:⁴

Չարենցի պոէմում հանդիպում են *աչքերը չոնէլ, դիւտտ, դիւցապն, դուար, իրա, խաշն, կուր* (ըստ Էդ. Աղայեանի բառարանի՝ 1. մակոյկ, նաւակ, 2. տաշտ, կոնք, կեր, կերակուր, ուտելիք, կուր դառնալ եւ կեր դառնալ, ճարակ դառնալ, կուր տալ եւ կեր դարձնել), *հանդեր, հօ, մահու, նոքա, ռամիկ, ցորեան* բառերն ու բառածուէրը, որոնք առաւել բնորոշ են գրաբարին եւ Կարնոյ բարբառին:

Թումանեանի պոէմում գործածուած են նաեւ բարբառային քերականական ձեւեր, առանց որոնց անհնար էր տիպականացնել հերոսներին: Օրինակ՝

Հիմի ես կ'ելնեմ, Սասմայ դաշտ *կ'երթամ*: (Թ, էջ 26)

Կոհի *տի գնամ*: (Թ, էջ 26)

Թումանեանի պոէմում բազմաթիւ են յարադիր բարդութիւնները: Նա բնականօրէն առաւելութիւն է տալիս բայական յարադրութիւններին, որոնց ռճական հնարաւորութիւնները աւելի շատ են ու բազմազան: Ահա ժողովրդական ռճին հարապատ յարադիր բայեր, որ գործածել է Թումանեանը. *աղօթք անել, անց կենալ, աշխատանք անել, բաց անել, հէրութիւն անել, մտիկ անել, միտք անել, պար բռնել, տապ անել, քրտինք թափել, քուն մտնել* եւ այլն:

Չարենցը պոէմում գործածել է ուրիշ յարադրութիւններ՝ *կոհի անել, նորնակոխի անել, քրտինք քամել, տէր կանգնել*: Վերջին յարադիր բարդութեան հետ միասին հանդիպում է նաեւ նրա իմաստը մէկ բառով արտայայտող *տիրել* ձեւը. որը ռճական արժէք է հաղորդել նրա խօսք՝

Եւ *տէր կանգնեցին* ու *տիրեցին*

Մհերի ամբողջ ունեցածին: (Չ, էջ 179)

Թումանեանի պոէմը հարուստ է նաեւ կրկնաւոր բարդութիւններով՝ արտայայտուած են գոյականով, ածականով, թուականով՝ *դէպ-դէպ, շարան-շարան, քուլայ-քուլայ, լերան-լերան, ծալ-ծալ, սեւ-սեւ, հապար-հապար, մի-մի, մին-երկու, եօթ-ութ, վրոսպ-վրոսպ*:

Կրկնաւոր բարդութիւն է նաեւ Թումանեանի պոէմում *քնել-մնել* բառը, որի երկրորդ բաղադրիչում *ք-*ն հնչիւնափոխուել է *մ-*ի:

Չարենցի պոէմում, ի տարբերութիւն Թումանեանի, աւելի նկատելի են արմատի կրկնութեամբ բառերը՝ *բազմաբազում, ժանտաժանտ, շողշող, հրահրուն, հուրհուրան* եւ այլն, իսկ Թումանեանի պոէմում այդպիսի մէկ բառ կայ՝ *կեծկրծալի*:

Չարենցի պոէմում կան նաեւ զուգադրական բայեր՝ *ընկնել եւ մեռնել, նայել եւ տեսնել, տանել-պահել, քշել-բերել, քշել-գնալ*:

⁴ Դեմիրճեան Դ., Երկերի ժողովածու, հ. 8, Եր., 1963, էջ 131:



Հոլովուած ձ-ով յարադրական բարդութիւններ են Չարենցի պոէմում **ապգով եւ ցեղով, ահով-դողով:**

Երկու պոէմներում էլ յարադիր բարդութիւնների գործածութիւնը նպաստում է խօսքի պատկերաւորութեանը եւ աւելի արտայայտիչ դարձնում այն:

Թումանեանի պոէմում տեղին են գործածուած բազմաթիւ դարձուածքներ, թեւաւոր արտայայտութիւններ, ասացուածքներ, անէծքներ ու օրինանքներ, որոնց հիմքում ընկած է ժողովրդական մտածողութիւնը՝ բնորոշ պատկերաւորութեամբ ու սեղմութեամբ: Դարձուածքներ՝ **արջերոց անել, գոմն անել, լեղին ջուր կտրել, սեւ կապել, մահի տարած, շիինք ծոել, քաղցր աչքով մտիկ անել, կրակ դառնալ, սրբ-տաճաք լինել, լեզուն պապանձուել, մտքի ծովն ընկնել, սեւ սուզ կապել, վախից ջուր կտրել, պաղատանք անել, (Թումանեան), գլխում քամի խաղալ, փուչ գլուխ, վիպ ծոել, գլխին քամի փչել (Չարենց):**

Նկատելի է, որ Թումանեանը գործածել է Լոռուայ բարբառին յատուկ ժողովրդական **շիինք ծոել** դարձուածքը, մինչդեռ Չարենցը նախընտրել է դրա՝ գրականին մօտ **վիպ ծոել** համարժեքը:

Ակներեւ է, որ բայական դարձուածքները մեծ թիւ են կազմում՝ ժողովրդական մտածողութեանն աւելի հարապատ լինելու պատճառով:

Թումանեանի պոէմում հանդիպում են ժողովրդական իմաստութիւն արտայայտող եւ հերոսների խօսքը աւելի պատկերաւոր դարձնող ասացուածքներ՝ **«Հէ՛յ գիդի օրեր, որուն՞դ էք կորել», «Լաշի՛ն հասնեմ, թէ նաշին», «Մեր գիրն էլ հալքաթ էսպէս է գրած», «Մենք մահինն ենք միշտ ու մահը մերը», «Թիւ կայ աստղերին, թիւ չկայ սօրքին», «Բայց վա՛յ խեղճ որբին աշխարհի վրայ, Թէկուպ առիծի կորին լինի նա»:**

Թումանեանը բարձր էր գնահատում առած եւ ասացուածքները՝ դրանք համարելով **«լեզուի ու գրականութեան ամենաթանկ պարղերը»**, որ գալիս են ժողովրդի հոգուց ու մտքից, արտայայտում բանաստեղծի խոհերը բնութեան եւ մարդու կեանքի մասին:

Թումանեանի պոէմում կարեւոր տեղ ունեն ժողովրդական լեզուին յատուկ անէծքները՝ **Մահը տանի քեզ: Դու կրակ ուտես, ցաւ ուտես: Հողեմ գլուխդ: Տունդ քանդուի, կին: Լեզուն պապանձուէր:**

Պոէմներում կարեւոր դեր ունեն հոմանիշները:

Ե՛ւ Թումանեանը, ե՛ւ Չարենցը, օգտագործելով միեւնոյն կամ մօտ իմաստ արտայայտող բառեր, երեւոյթները ներկայացրել են բազմակողմանիօրէն, տուել նուրբ ու անհրաժեշտ բացատրութիւններ:

Օրինակներ Թումանեանի պոէմից.

- Կատաղեց, փրփրեց** Մարայ թագաւոր:
- Աղաչանք արաւ, ընկաւ ոտները:**
- Լեղին ջուր կտրեց, կապ ընկաւ լեզուն:** (Թ, էջ 25)
- Չարդեց, փշրեց մինչեւ կէսօր:** (Թ, էջ 29)

Օրինակներ Չարենցի պոէմից.

- Սարսափեց, սարսեց** էութեամբ ողջ: (Չ, էջ 181)
- Եւ ժողովուրդը Սասնայ անկոր՝
- Խեղճացած, խոնարհ ու գլխիկոր:** (Չ, էջ 182)
- Մնա **անժառանգ ու անսերունդ**
- Երկիր մի ամբողջ ու ժողովուրդ: (Չ, էջ 177)



Լեզուական հոմանիշներ են Չարենցի պոէմում՝ *ապատ եւ անարգել, անհատնելի եւ անեպրական, զառառ եւ պեհեր, խոնարհ եւ գլխիկոր, խօսք եւ զրոյց, կառավարել եւ իշխել, յախտեան եւ յար, ձի եւ նծոյգ, ձիերի խրխինջ եւ խրխնջոց, ռամիկ եւ ռանչպար. վառ ու պայծառ*: Թումանեանի պոէմում՝ *հանդ ու դաշտ, մէգ եւ մշուշ, ողբալ եւ կոծել, դղորդ եւ դմբդմբոց, այծեամ եւ կիտար եւ եղջերու, ռամիկ եւ ռանչպար, փքուած եւ ուռած* եւ այլն:

Այս հոմանիշները օգնել են Թումանեանին ու Չարենցին՝ խուսափելու կրրկնութիւններից, ռճաւորելու հերոսին ու միջավայրը՝ խօսքը դարձնելով աւելի բանական ու կենդանի:

Ածանցման եւ բառաբարդման միջոցով Չարենցն ստեղծել է բազմաթիւ բառեր: *Ան-* նախածանցով բառեր, որոնց ժխտական իմաստ են հաղորդում պատկերուող երեւոյթներին՝ *անբաւ ուժ, անժառանգ ու անսերունդ ժողովուրդ, աներեր սիրտ, անկոր կամք, անծիր ահ, անմիտ ռամիկ, անսասան դիւցապուն, անհուն խանդ, անձայր ուժ, անխարդախ ու անվեհեր արքայ, անհաշիւ զօրութիւն, անդուլ ձեռք, անճառ մահ*: Թումանեանն աւելի քիչ է դիմել նորակազմութիւնների կիրառութեան՝ *աննման սարեր, անտէր կով ու եզ, անծէր ծով, անվեհեր, անահ, անտէր, անորդի* եւ այլն:

Չարենցի բառագործածութեան նախընտրած ձեւերից մէկը նոյն արմատներով բարդութիւններ կազմելն է: Օրինակ՝ *արնահոտ, արնակոխ, արնանենգ*, դարանամիտ, միամիտ, մահաբեր, մահատիպ, մահահոտ, հուրհուրայ, հուրիեր, հրցայտ, հրահրան, հրածին, չարածին, երկնահեց, երկնահեռ, սեւահեր, պեհեր, արմատի կրկնութեամբ՝ *ժանտաժանտ, բարձրաբերձ, բազմաբազում*, այլ բարդ բառեր՝ *դառնադէտ, բազմահապար, ահաբեկ, աշխարհավեր, կայծակնափայլ, ոսկերառ, հյօրապօր* եւ այլն:

Ինչպէս տեսնում ենք, Չարենցը ստեղծել է նոր բառեր, որոնց իմաստն ընդգծում է որոշակի բառական միջվայրում՝ աւելի խստացնելով կերպարների եւ երեւոյթների բնուագիրը:

1. Իսկ Ձէնով Օհանը *մահատիպ* (Չ, էջ 185)
2. Տեսաւ արշաւանք մի *մահահոտ* (Չ, էջ 187)
3. *Արնահոտ*, դաժան թրի տակով (Չ, էջ 182)
4. Որ դաւով խարդախու *արնանենգ*
Քեզանից, Դաւիթ, ոին հանէ (Չ, էջ 183)
5. Իսկ վերից Մելիքը *արնանենգ* (Չ, էջ 184):

Բերուած օրինակներում ընդգծուած բառերը, տուեալ բառական միջավայրից դուրս, առանձին գուցէ չունեն այն իմաստը, ինչ արտայայտում են գեղարուեստական պատկերում. այստեղ նրանք դիպուկ են ու բնութագրող, սակայն, որպէս դիպուածային բառեր, կարող են յետագայում չգործածուել: Հեղինակն իր խօսքը տպաւորիչ եւ ընկալելի դարձնելու համար տեղին եւ յարմար է գտել հենց դրանց գործածութիւնը:

Չարենցի պոէմում սակաւ հանդիպում են գրաբարեան բառեր ու ձեւեր. *անսալ, արեգական, բառնալ, բարբառել, կամիւ, կամիս, նոքա, ցորեան* եւ այլն:

Թումանեանի պոէմում կան հին ու հնացած բառեր եւ բառաձեւեր՝ *այր, գապ* (երկարութեան չափ - պարսկ.), *գուրպ* (մեծ ու կարճ գաւապան, որ գործածուել է որպէս պէնք), *լիդր, խարաջ-խարջ* (հնացած), *կոռ, կորկում* (որեւէ բանի կպած, մնացած կեղտ), *մահու, մկունդ* (նիպակ, գեղարդ), որոնք կարելի է համարել հնաբանութիւններ: Սրանք նպաստում են ժամանակաշրջանի պատկերաւորմանը-երանգաւորմանը:

Թումանյանի և Չարենցի «Սասունցի Դաիթը» համանուն պոեմների բառապաշարի ուսումնասիրությունը ցոյց է տալիս, որ երկու հեղինակներն էլ, իրաքանչիւրը իրովի, մեր լեզուի բառակազմական հնարարությունները օգտագործելով, հարստացրել են հայերէնի բառապաշարը: Թումանյանը նախընտրել է ժողովրդախօսակցական լեզուն, օգտուել ժողովրդի մտածելակերպին յատուկ բառապաշարից: Նրա պոեմում բազմաթիւ են դարձուածքներն ու ասացուածքները, հոմանիշ բառերը: Բարբառային բառերի հմուտ ու ճաշակով ընտրությունը կենդանի ու բնական է դարձրել Թումանյանի խօսքը: Իսկ Չարենցի պոեմում աւելի հազւադէպ են բարբառային տարրերը: Լեզուն գրական է՝ լի նորակազմություններով, հարուստ՝ բարդությունների տարբեր տեսակներով: Դրանք անպայմանօրէն նպաստել են մեր լեզուի հարստացմանը և ուղենիշ դարձել ժողովրդական բանասիրութեան հիմքի վրայ գրական երկեր ստեղծող յաջորդ հեղինակների համար:

